ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 24 >> 07 2013թ. N: 173-Ա **ք.Գյումրի**

<< ԱՐԹԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<իա>> ենթակետի, 84-րդ հոդվածի 1-ին կետի <<իգ>>,<<իդ>> ենթակետերի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հաստատել՝

1) <<Արթիկի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2013 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Ընկերության 2013 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ընկերության գործադիր տնօրենի վարձատրության չափը 2013 թվականի համար սահմանել մեկ հաստիքային միավորի համար ամսական 185000 դրամ:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է